

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյալ խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԴՐԱՎՈՐՆԵՐՆԵՐ ԵՒ ՔՆՆԱՔԱՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Ներկայում 1887 թիւի

Հրատարակվում է Թիֆլիսում, նորն դրեքով և նորն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական
ՀԵՌԱՐԱՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱՎՈՐՆԵՐ ԵՒ ՔՆՆԱՔԱՆԵՐ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարիայի տանը):
Կայսերական ռուս լեզուի քաղաքների «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «Мшакъ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հացի առուտուրի այժման վիճակը.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսանողութիւն և ժողովրդի
ուսումնասիրութիւն. Նամակ Գլխավորից. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին
կան խնդիր. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.
—ՀԵՌԱՐԱՐՆԵՐ.—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեղադր մարդու
կենսագրութիւնը.

ՀԱՅԻ ԱՌՈՒՏՈՒՆԻ ԱՅԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Անցեալ տարի, երբ Անդրկովկասը սկսեց
աճող քանակութեամբ ցորեն վաճառա-
հանել դէպի արտասահման, շատերը յա-
փառակալեցին այդ իրողութեամբ: Դրա մէջ
տեսնում էին մեր երկրի ապագայ հարս-
տութեան մի հաստատ գրաւական, շատե-
րը այն համոզմունքն էին յայտնում որ ցո-
րեն տարուց տարի դառնալու է մեր երկ-
րի համար արդիւնաբերութեան և հա-
րստութեան մի նոր աղբիւր: Հարկաւոր էր
ապացուցանել որ մեր երկրից վաճառա-
հանվող կամ արտահանվող ցորենի աճա-
րին քանակութիւնը չէր կազմում տեղա-
կան ազգայնականութեան ներքին գործածու-
թեան, և նրա առօրեայ մոտեցիկ համար
անհրաժեշտ պաշարը, այլ այդ ցորենը մեր
երկրի արդիւնաբերութեան աւելորդն էր,
որ և կարելի էր արտահանել: Եթէ այդ
ձգնարիտ այդպէս լինէր, եթէ մենք ձգնա-
րիտ ծախեինք ցորենի աւելորդը և ոչ թէ
մեզ համար անհրաժեշտը, այն ժամանակ

ուղիղ է որ ցորենի առուտուրը կը բաց
անէր մեր երկրի համար հարստութեան
մի նոր աղբիւր:

Բայց այժմ հետզհետեւ պարզվում է այն
իրողութիւնը որ ցորենի անցեալ տարվայ
արտահանած քանակութիւնը ուրիշ բան
չէր, եթէ ոչ 1884—1885 թւերի առատ
հունձի խնայողութիւնը, ուրեմն տարուց
տարի մենք չենք արդիւնաբերում ցորեն
աւելի մեծ քանակութեամբ, քան թէ
հարկաւոր է մեր երկրի ազգայնականութեան
ներքին գործածութեան համար, այլ ան-
ցեալ տարվայ արտահանած ցորենը մի
քանի առատ տարիների խնայած պաշար
էր, իսկ տարեկան այնքան է արդիւնաբե-
րում Անդրկովկասը, որ հազիւ մեր սեփա-
կան պէտքերին է բաւականութեամբ տալիս:
Ուրեմն երբ ծախում, արտահանում մեզ
մեր ցորենը օտար երկրները, այդ մեզ
համար անհրաժեշտ ենք ծախում և ար-
տահանում, և ոչ թէ աւելորդը:

Մեր խօսքերի ապացույցը կարող է այն
լինել, որ մեր երկրի արդէն շատ տեղե-
րում անցեալ տարվայ աճողին արտահա-
նութիւնից յետոյ՝ գիւղացիների մօտ ցո-
րեն չէ մնացել այնքան ցանքերի համար և
գիւղացին այժմ ստիպված է փոխ առնել
ցորեն չարչի մօտ:

Բայց դարձեալ մենք չենք ուրանում որ
մեր երկրից ցորենը շարունակում է ար-
տահանվել բաւական մեծ քանակութեամբ:
Եւ դա, դրժնական մարդկանցից մեր հա-
ւաքած տեղեկութիւններին համեմատ, դար-
ձեալ 1884—1885 առատ տարիներից
մնացած պաշարն է, որ գիւղացիներից

առնելով վաճառական-չարչիները մինչև
այժմ հաւաքել, ամբարել էին իրանց մօտ:

Բայց ամենալաւ ապացույց թէ ընդհան-
րապէս երկրի մէջ պակասել է հացը, այն
է՝ որ մի կողմից ցորենի և ալիւրի գինը
հետզհետեւ բարձրացել է, իսկ միւս կողմից,
որ այժմ նորից սկսել են բաւական մեծ
քանակութեամբ ցորեն և ալիւր բերել մեզ
մօտ Ռուսաստանի ներքին նահանգներից:
Ուրեմն ցորենի անցեալ տարվայ աճա-
րին արտահանութիւնից յետոյ երկրի մէջ
ընդհանրապէս, այսինքն գիւղացիների մէջ,
ցորեն այլ ևս չը կայ, եթէ այդ բերքը
մէկ տեղ կայ՝ նա հաւաքված, ամբարված
է մի քանի անհատների, չարչի-վաճառա-
կանների մօտ, և դա էլ 1884—1885 ա-
ռատ տարիների ցորենի խնայողութեան
մնացորդն է, որ այդ մի քանի վաճառա-
կանները մինչև այժմ էլ շարունակում են
արտահանել օտար երկրները, որովհետեւ
արտահանում լաւ յատկութիւն ունե-
ցող այդ ցորենի համար լաւ գին են տա-
լիս.—բայց քանակութեամբ այդ ցորենը
այնքան քիչ է, համեմատելով երկրի ընդհա-
նուր պահանջի հետ, որ մինչևեւ մեր ցո-
րենը մի կողմից արտահանվում է Նւրսպա,
մանաւանդ Ֆրանսիա, միւս կողմից մեծ
քանակութեամբ ցորեն և ալիւր բերվում
է մեզ մօտ Ռուսաստանի կողմերից՝ Ուկ-
րայից, Բոսնիայից և այլն:

Ուրեմն այժմ արդէն կարելի է հաստա-
տել հետեւեալ իրողութիւնը. մենք տարուց
տարի այնքան չենք արդիւնաբերում ցորեն,
որ նա համար ներքին գործածութեան
բաւականութիւն տայ, համ էլ արտահանվի
ու այդպիսով դառնայ մեզ համար անտեսա-
կան արդիւնաբերութեան, երկրի հարստու-
թեան համար մի նոր աղբիւր և եթէ
անցեալ տարի աճողին քանակութեամբ
ցորեն ենք արտահանել, այդ արտահանու-
թիւնը, որ մնացած մինչև այժմ էլ շարու-
նակվում է, հետեւեալ չէ մի տարվայ
բերքի, այլ անցեալ մի քանի առատ տարի-
ների բերքի խնայողութեան, ուրեմն չենք
կարող իւրաքանչիւր տարի արտահանել
այնքան, որքան անցեալ 1886 թւին ենք
արտահանել: Վերջապէս ամենալաւ ապա-
ցույցը որ այժմ երկրի մէջ ցորենի պակա-
սութիւն կայ, այն անհրաժեշտ իրողութիւնն
է, որ այս օրպէս Ռուսաստանից նշանաւոր
քանակութեամբ սկսել ենք ցորեն և ալիւր
ստանալ Անդրկովկասում:

Ուրեմն մեր երկրի ցորենի առուտուրը
մտել է այժմ մի նոր փազիսի մէջ, այն
է փոխարինում է անհրաժեշտ իրողութիւնն

մի կողմից մենք անդրկովկասեան ցորեն
շարունակում ենք արտահանել Նւրսպա,
գլխաւորապէս Ֆրանսիա, քանի որ այնտեղ
մեր ցորենը առնվում է իր լաւ յատկու-
թեան պատճառով, ուրեմն և մեր չարչի-
վաճառականներին լաւ գին են տալիս այդ
ցորենի համար, իսկ միւս կողմից, որովհետեւ
մեր երկիրը տարուց տարի այնքան չէ արդիւ-
նաբերում ցորեն, չը նայելով որ մի քանի ա-
ռատ տարիներից ցորենի դեռ մնացորդ
պաշար ունենք, որ այդ բերքը համար
ներքին գործածութեանը բաւականութիւն
տայ, համ էլ անդադար վաճառահանվի—
այդ պատճառով արուեստական, անբնական
չափերը ընդունած արտահանութիւնից
առաջացած պակասը լրացնելու համար
ստիպված ենք Ռուսաստանի ներքին նա-
հանգներից ներմուծել մեր երկիրը, թէ-
կուր աւելի օտար, ուրեմն և էժան տեսակի
ցորենի գրեթէ նոյնքան մեծ քանակութիւն,
որքան արտահանել ենք դէպի օտար եր-
կրները:

Իսկ երբ որ անցած առատ տարիներից
մնացած ցորենի ամբողջ պաշարը վերջա-
ցած, արտահանված կը լինի, մեր երկիրը
տարեկան երբեք այնքան չի արդիւնաբերի
հացահատիկներ, որ այդ բերքը կարողա-
նար մեզ համար մշտական շահաւէտ ար-
տահանութեան առաւելագույն դառնալ: Եւ եթէ
մեր չարչի-վաճառականները կը շարունա-
կեն էլ տարուց տարի արտահանել մեր
ցորենը դէպի Նւրսպա, քանի որ այնտեղ
լաւ յատկութեան պատճառով միշտ առնող
կը գտնվի,—միւս կողմից միշտ ստիպված
կը լինենք ցած տեսակի ցորեն գրեթէ
նոյնքան քանակութեամբ բերել տալ Ռու-
սաստանից:

Ուրեմն մեր հացահատիկների առուտուրը
զուտ շահ չի ներկայացնի մեր երկրի հա-
մար, այլ մի մշտական, անընդհատ փո-
խարինում է մեր հացը: Մի կողմից մենք
կարտահանենք մեր ցորենը Նւրսպա, իսկ
միւս կողմից կը ներմուծենք մեզ մօտ ու
ինքնիւր գործ կաճենք Ռուսաստանի ցորե-
նը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱ-
ՍԻՐՈՒԹԻՒՆ

Ամառը հասաւ, և մեր ուսանողները Պետեր-
բուրգից, Մոսկվայից, Ռուսաստանի դաշնայն ու-

թեան մէջ, ինչպէս և տղամարդը:

Բայց արձակեցէք ամուսնական կապերը և կի-
նը կը բռնի իրան վայել աստիճանը լուսաւորու-
թեան սանդուղտի վրա: Թող լինի կատարեալ ա-
զատութիւն կնոջ և տղամարդու յարաբերութիւն-
ների մէջ և կը տեսնենք, որ այն ժամանակ կան-
հետանան այն բոլոր այլաբանքներ և տգեղ երևոյթ-
ները, որոնց իւրաքանչիւր քայլում հանդիպում
ենք մենք այժմ...

Այդ ժամանակները, չար լեզուները պատմում
էին, թէ Ռուսան Թիֆլիսում ինչ որ մի բան էր
արել մի օտարազգի օրիորդի հետ, որից յետոյ
խեղճ օրիորդը փորձ էր արել խեղդվելու: Ի
հարկէ, զուցէ կարելի է չը հաւատալ այս լուրին,
մինչև անգամ իդուր տեղն էր գուցէ դրա միջա-
տակելը, որովհետեւ կարող են շատերը կարծել
թէ դրա նպատակն է արտաւարել Ռուսանի ա-
նունը, որը այն ժամանակ «ազատամիտ» և
«հայրենասէր» երիտասարդներից մէկն էր հա-
մարվում «Ազգասէր», «հայրենասէր», ընդ
մարդ: Լավում էր բոլորի բերանից, որ Ռուսանին
աւելի տաքացնում, աւելի ոգևորում էր: Բայց
խօսելու և գրելու նա և գործում էր,—ներկա-
յայտումներ էր տալիս բարեգործական նպատակ-
ներով, նուրբատուութիւններ էր հաւաքում աղ-
քատ ուսանողների, ընտանեկանի և զանազան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՌԱՎՈՐ ՄԱՐԳՈՒՆ ԿԵՆՏԱՐԻՈՒԹԻՒՆԸ

Ոսկանը ամառվայ տաք ամիսները միշտ անց
էր կացնում դաւառում, իր ծննդավայրում, ուր
նոյնպէս դադար չէր առնում: Տեղային սիրողնե-
րի հետ ներկայացուցանել էր տալիս յօգուտ ու-
սումնարանի, կամ հասարակաց ընթերցարանի
կամ տեղային երիտասարդութեան շուրջը հաւա-
քած խօսում էր եռանդով դանադան բարձր նիւ-
թերի վրա:

—Ինչ է պատրիոտը, բացականչում էր մի օր
Ոսկանը տաքացած,—պատրիոտը մի և նոյն կօս-
մայություն է, բայց միայն այն դանադանութեամբ,
որ պատրիոտը գործում է իր հայրենիքում նախ
և առաջ իր հայրենակիցների համար: Այդ շատ
էլ բնական է, այդպէս է պէտք է լինի, որովհե-
տեւ հասարակ մահկանացուն ամբողջ մարդու-
թեանը չէ կարող ծառայել. նա պէտք է ան-
պատճառ մի անկիւն ընտրի իր գործունէութեան
համար և նա ընտրում է ի հարկէ իր հայրենիքը,

որտեղ նա աւելի օգուտ կարող է բերել, որովհե-
տեւ աւելի մօտ ծանօթ է այնտեղի կենսային պայ-
մաններին և պահանջներին հետ: Զիջն ասած,
տաքանում էր հետզհետեւ Ոսկանը, կօսմայությո-
ւ չը կայ մինչև անգամ աշխարհում, դրանք մի
խումբ շարժամաններ են, որոնք, անընդունակ
լինելով մի օր և է աղբի, մի օր և է ժողովրդի
օգուտ տալու, իրանց երեսը ծածկում են կօսմայու-
թեան շարժումները: Ուրեմն մի քիչ թէ շատ
կրթված պարագիտ, ժողովրդի արեւն քրտնե-
րում, իրան կօսմայությո-
ւ յետոյ, ինչպէս այդ հարստահարիչները, այդ
վաշխառուները արժանի են համարում իրանց
այդ սուրբ անուան:

Երկար և եռանդով էր խօսում մեր Թովմաս
աղի տղայ Ոսկանը այսպիսի նիւթերի վրա:

—Նայեցէ՛ք ձեր շուրջը, խօսում էր մի ուրիշ
անգամ Ոսկանը, տեսէ՛ք ինչ անարդարութիւններ,
ինչ աշխարհակ երևոյթներ են պատահում այդ
կենսային կոչված խաօսի մէջ: Այ՛, սարսափելի է այն
կենսային, ուր չը կայ սէր, հաւատարմութիւն, ուր ի-
րար զուգընթաց գնում են հարստահարութիւն և
ստրկութիւնը.—անտանելի և խայտառակ է այն
կենսային, ուր կանանց վրա նայում են իբրեւ ան-
պէտք առարկաների վրա, որոնց մեր փչացած տղա-
մարդիկ չեն առնի առանց հարուստ օժիտի:

(Կը շարունակվի)

ղորեղ յայտագրով առաջարկել է Սուրբաթին չը հաստատել անդր-թիւական դաշնագիրը:

ԲԵԼԳՐԱԿ, 11 յունիսի կիսապաշտօնական «ՄԵՏԱՅՈՒՆ» լրագիրը ասում է, որ Ռիստիչի միջնորդութեան ծրագիրը չէ պարունակում ոչինչ այնպիսի բան, որը կարող լինէր անհանգստացնել Աւստրիային. Ռիստիչ, ի հարկէ, ձգտում է բարեկամական յարաբերութիւններ պահպանել Ռուսաստանի հետ, բայց այդ չէ խանգարում նոյնպիսի յարաբերութիւններ ունենալ և Վիէնայի հետ չա լաւ է հասկանում սերբիական և աւստրիական շահերի ընդհանուր լինելը: Գրա հետ միասին «ՄԵՏԱՅՈՒՆ» լրագիրը հերքում է աւստրիական լրագիրների այն յայտնութիւնները, որ սերբիական միջնորդութեան փոփոխութիւնը իբրեւ թէ տեղի է ունեցել ուստաց դեսպանի գործակցութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 11 յունիսի կայսրի առողջութիւնը չարունակում է լաւանալ, և այժմ հաստատապէս հաստատացնում են, որ կայսրը չուտով կուղևորվի Էմս:

ԼՕՆԻՍՆ, 11 յունիսի: Յօքլեանի տօնախմբում թիւները չարունակվում են. երէկ Հայդ-Պարկում,

թագուհու ներկայութեամբ, մեծ տօն կատարվեցաւ 30,000 երեխաների համար:

ՍՕՖԻԱ, 11 յունիսի: Լուրեր են տարածվում, որ ազգային ժողովը այնու ամենայնիւ կը կատարի իշխանի ընտրութիւնը: Ռիստիչ յայտնեց բոլգարական խնամակալութեանը, որ ցանկանում է բարեկամական յարաբերութիւն պահպանել Սերբիայի և Բոլգարիայի մէջ:

ՎԻԵՆԱ, 11 յունիսի: Սերբիայի թագաւորը, առողջութիւնը վերականգնեցնելու համար, շուտով ուղևորվելու է դէպի Գլեյխենբերգի ջրերը:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ. Մ. Մ. Ուղարկեցինք ձեզ Աղամանի «Եկեղեցի» գրքի մի օրինակ:
ՄՕՍԿԱ. Լ. Ս. Ստացանք ձեր նամակը, կուղարկենք ձեզ ձեր յօդուածը:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒՂՈ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԷԼԻՔՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)
ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ
ՍՈՒԼԻԱԿԻ ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆՅՑ (GIRONDE)



Առաջնորդ համար Բենեդիկտեան հայրերից՝ պատուաւ էլիկսիրի ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է առաջնորդ փշանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է առամները, մաքրում է և պահպանում է ծնօտը:

ԳԻՆԸ դօրակը 2 և 8 ֆրանկ. ֆօլիո՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատաւ՝ արկղիկը 2 ֆրանկ:
Հիմնադրութիւնը գոյութիւն ունի 1804 թիւից.
Գլխաւոր ազնետ SEGUIN, Բօրչօ (Ֆրանսիա).
ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է պ. Բերլըմսի մագաղինում և պարֆումէրների ուրիշ մագաղիններում:
ՎԼԱԴԻԿԱՎԱՍՏՈՒՄ. Է. Ա. Էնկէնի և Գ. Ա. Օտիւլի մօտ:

29—48

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՒ ԶՈՒԵՆԱԻԵՐԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՑԱՐԱՆԸ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԵՒ ՍՕԼՕԼԱԿԻ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ՝ ՏՈՒՆ ԶԱԿԵԼԻԻ
Ընդունում է թէ հակեր կապելու յանձնարարութիւնը, ապահովացնելով նրանց արժողութիւնը, և թէ նրանց ճանապարհելու դէպի Աբասթուման, Բօրժօմ, Սուրամ և երկաթուղու գծի վրա դռնված միւս ամառանոցները, և նմանապէս դէպի Ռուսաստանի և արտասահմանի բոլոր յայտնի քաղաքները:

1—1

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Զորեշարթի, յունիսի 24-ին, ԳԱԼԻԱ (LA GAULE) շոգենաւը, նաւապետ ՏԱԲԱՐԼԻ (TABARLY) գլուխ կը գնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէյը: Տեղեկութիւնների մասին պէտք է գիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօլին, նախկին Արժառնի գալլերէում, № 103.

2—4

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է «Մշակի» խմբագրատանը, Կենտրոնական գրաւաճառանոցում և Յ. Տէր-Սարգսեանի խանութում (Գլորցովայա փողոցի վրա):

ՇԷՔՍՊԵՐ

ԵՒ ԻՒՐ ՀԱՄԼԵԹ ՈՂԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐՆ ՈՒ ՔՆՆԱԳԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ
աշխատասիրեց
ՊԵՏՐՈՍ Հ. ԱՂԱՄԵԱՆ.
Գինն է 1 ռուբլի.

6—10

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԷՔԱՆՏԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆարքիկաների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետեւեալները՝ մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդը, բուրդ, բամբակ, յորենեղէն, նաւթ և ընդհանրապէս կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում: Գանձնարարութեամբ կընդունի զարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնառու պայմաններով փող կը տայ ի հաշիւ մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МИЛАНЪ (Италия).

ՀԱՂՈՒԵԿՂԻՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Յ Ի

Գ1-ն Յունիսի 1887

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազուայ բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	56,145—31	8,750—38	64,895—69	1. Հիմնական դրամադրուս.....	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	1,109,177—73	430,000 —	1,539,177—73	2. Պահեստի դրամադրուս.....	148,563—31	— —	148,563—31
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորազրութեամբ.....	1,594,995—25	472,421—03	2,067,416—28	3. Արդիւնք 1885 թ. ի պահեստ.....	129,491—17	— —	129,491—17
4. Զեղչումն տոկոսաբեր թղթերի, կտրօնների և այլն.....	34,314—28	105—22	34,419—50	4. Դրամական աւանդներ՝ ա) Պայմանաժամով.....	1,562,615 —	41,880 —	1,604,495 —
5. Փոխառութիւն գրաւականով՝ ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի. բ) Պաշտօնի ապահ. տոկոսաբ. թղթերի. գ) ապրանքների.....	765,057—15 130,059 — — —	122,208 — 6,365 — 5,580 —	887,265—15 136,424 — 5,580 —	բ) Պաշտօնի.....	329,230 —	31,820 —	361,050 —
6. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր, 7. Ոսկի և արտասահմանի փոխանակազրկեր., 8. Թղթակիցներ՝ ա) Նոյա հաշիւ (Loro)..... բ) Բանկայի հաշիւ (Nostro).....	310,761—11 2,695—03 1,683,843—62 1,678,404—82	11,652 08 116—18 — — — —	322,413—19 2,811—21 1,683,843—62 1,678,404—82	գ) Ընթացիկ հաշիւով հաւարակ.....	1,067,509—74	625,648—62	1,693,158—36
9. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչութեան հետ. Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժնի հետ.....	373,505—45 — —	277,307—86 — —	277,307—86 — —	դ) Գալլիանաւոր.....	— —	234,781—06	234,781—06
10. Բողոքուած մուրհակներ *). 11. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւններ.....	381,464—60 12,350 —	— — 1,200 —	381,464—60 13,550 —	5. Թղթակիցներ՝ ա) Նոյա հաշիւը (Loro)..... բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	1,242,741—06 2,241,888—14	— — — —	1,242,741—06 2,241,888—14
12. Ընթացիկ ծախսեր.....	18,303—91	6,547—45	24,851—36	6. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչութեան հետ.....	— —	367,528—87	367,528—87
13. Կանխարասիք և սկզբնական ծախսեր.....	3,701—68	3,582—76	7,284—44	7. Բանկայի բաժնետոմսերու անվճար կրօնների բաշխը 1882, 1883 և 1884 թ. 8. Զր վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց.....	2,927—60 57,793—55	— — 7,326—93	2,927—60 65,120—48
14. Յետ ստացուելիք ծախսեր.....	11,336—85	622—50	11,959—35	9. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	73,939—10	29,742—16	103,681—26
Բ. Ա.	8,166,115—79	1,346,458—46	9,512,574—25	10. Փոխանցիկ գումարներ.....	27,238—87	7,730—82	34,969—69

* Բողոքուած մուրհակներից փնտնելը, որոնք կարող են տեղի ունենալ, ծածկելու համար յատկացրած է առանձին դուժար..... 129,491 ռ. 17 կ.